

ԳԵՏԵՐ ՏԵՍԱԿՅՈՒԹԻՒՆՆԵՐ ԿՈՒՆԵՆԱՆ ՆԱԽԱԳԱՀԱԿԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ՀԵՏ

ԵՍՀԿԻ ժողովրդավարական հաստատություններու եւ մարդկային իրաւաց գրասենեակի դիտորդական առաքելութեան պատուիրակութեան անդամներ նախընտրական այս օրերուն Հայաստանի մէջ հանդիպումներ կ'ունենան տարբեր թեկնածուներու հետ:

Գետերու պատուիրակութեան առաջնորդ Փիթըր Ալթեր յայտարարեց, որ պատուիրակութիւնը հանդիպումներ ունեցած է 8 թեկնածուներու հետ: Ալթերի համաձայն, որոշ թեկնածուներ դժգոհած են ծանուցումներու բարձր սակերէն:

ՔԱՐԱՄԷ, ՀԱՐՊ ԵՒ ՄՈՒԱՌԻԱՏ ԽԻՍՏ ՔՆՆԱԳԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ ՈՒՂՂԵՑԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ ՀԱՍՑԵԻՆ

Խորհրդարանը երէկ առաւօտեան եւ երեկոյեան նիստերու ընթացքին շարունակեց պետական պիւտճէի նախագիծին քննարկումը: Առաւօտեան նիստին խօսք առնող 13 երեսփոխանները ընդհանրապէս անդրադարձան իրենց շրջաններուն վերաբերող հարցերու՝ պահանջելով բոլոր շրջաններուն համար բարգաւաճման ծրարներ, ինչպէս նաեւ լուսարձակի տակ առին բնակարանի հետաձգման թղթածրարը, ընդդիմութիւն — իշխանութիւնները, յարգելով թիւերը, ելեմտական եւ տնտեսական կացութիւնը:

Առաւօտեան նիստին առաջին խօսք առնող երեսփոխանը եղաւ Աբրահամ Շըհաբադ, որ նշեց, թէ պիւտճէին մէջ տեղ գտած թիւերուն փոխարէն, անհրաժեշտ է քննարկել այդ թիւերը ճշգրտելու մօտեցումն ու քաղաքականութիւնը: Երեսփոխան Ալաշտին Թրքրոյ պահանջեց որդեգրել տուրքերու արդար դրուիւն մը, որ ի մտի ունի տարբեր խաւերու եկամուտը: Ան նշեց, որ բնակչութեան հետաձգման սեփական շնորհման առաջին փորձը յոյս չի ներշնչեր:

Երեսփոխան Ապտալա Ֆարհաթ պահանջեց տուրքերու ամբողջական դրուիւն մը, որ փոփոխելի չէ: Երեսփոխան Ճորճ Գասարճի խիստ քննադատութիւններ ուղղեց վարչապետ Ռաֆիք Հարիրի: Ան նաեւ քննադատեց կառավարութեան ժողովներէն առաջ գոր. Լաւոնի եւ վարչապետ Հարիրիի միջեւ դռնփակ հանդիպումները՝ ըսելով, որ հոնկէ բացակայ է խորհրդարանը: Երեսփոխան Մոհամաձ Մէյս բողոքին կողմնակից էր կրկին շահերը դերադասելու ամէն ինչէ վեր՝ հաստատելով Սուրիոյ հետ գործակցութեան անհրաժեշտութիւնը: Ան կառավարութեան պահանջեց օժանդակութիւն յատկացնել շողոքածի մշակման:

Երեսփոխան Ֆարիս Մուսայտ միայն խօսեցաւ քաղաքական եւ ապահովական կացութեան մասին: Ան նշեց, որ բնակչութեան հետաձգման սեփական շնորհման առաջին փորձը յոյս չի ներշնչեր:

Ան նշեց, որ բնակչութեան հետաձգման սեփական շնորհման առաջին փորձը յոյս չի ներշնչեր:

Երեսփոխան Միսպահ Ահապ ըսաւ, որ պիւտճէին դէմ պիտի քուէարկէ: Երեսփոխան Ալի Պազլի արձարծեց իրաւագրկուած շրջաններու պահանջները: Ան հարց տուաւ, որ ինչո՞ւ դաւ լարուած է Ռեժիմի դէմ: Երեսփոխան Նասիբ Քանտարի պահանջեց վաւերացնել օրէնքները, որոնք Լիբանանի մէջ քաղաքականութիւնը պտտեցնելու կը վերածեն: Ան ըսաւ, որ տեղեկատուութեան մէջ պէտք է պահանջուին խօսքի ազատութիւնն ու ժողովրդավարութիւնը: Երեսփոխան Ամմար Մուսաուի խօսեցաւ պետութեան պարտքերուն

Շար.՝ էջ 3

ԱԶՂԱԿ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTERAIRE

1500 Լ.Ո. 75ԳԳ ՏԱՐԻ, ԹԻՒ 266 (21316) ԵՐԵՎԱՆԻ, 28 ՅՈՒՆԻՍԿՐ 2003 10 ԷՁ

EXPO BEIRUT
ՊԷՅՐՈՒԹԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՏՈՒՐԻ
5ԲԳ ՅՈՒՅԱՀԱՆԳԷՍ
ՉԵՂՉԻ ԱՄՍՈՒԱՆ ԱՌԻԹՈՎ
31 Յունուարտն 2 Մարտ, ամէն օր՝ կտօն էտք
Ժամը 4:00ԵՆ Երեկոյեան Ժամը 10:00:
Մասնակցութեամբ՝ զանազան երկիրներու:
Expo Beirut, Ain El-Mreissch
01/361040

ԻՐԱՔ ՄԵՐԺԱԾ Ե ԱՊԱԶԻՆՈՒԻԼ

ՅԱՅՏԱՐԱՐԵՑ ԶԱՆՍ ՊԼԻՔՍ

ՄԱԿԻ ՎԵՆԵՐՈՒ ԳԼԽԱՐՔ ԲՆՆԻՅ ՀԱՆՍ ՊԻՔՍ
Երէկ Ապահովութեան Խորհուրդին յայտնեց, որ Իրաք մերժած է ապապիւնուելու միջապային ընտանիքին պահանջը: Ան նաեւ ըսաւ, որ Պաղտատ չէ ներկայացուցած բաւական ապացուցներ, որոնք կը փաստեն, որ Իրաք փճացուցած է իր հաւաքական քանդումի վեներուն պահեստները:



Իրաքցիներ կ'այրեն Պուշի խրտուիլակը

Միւս կողմէ սակայն, կորիպային վեներու գլխաւոր քննիչ Մոհամէտ Պարատի կոչ ուղղեց յաւելել ամիսներու աշխատանքի՝ քննութիւնները ամբողջացնելու համար: Պիքս ըսաւ, որ Իրաք արտադրած է 8,500 լիթր անթրաքս, սակայն չկան համոզիչ փաստեր, թէ անթրաքսը փճացուած է: Ուշինկընդի հակապղտուրիւնը չուշացաւ: անկիւ ՄԱԿԻ պահանջեց գործի լծուիլ Իրաքի դէմ: Երբ ՄԱԿԻ գլխաւոր քննիչները կը պատրաստուէին տեղեկագիրը ներկայացնելու Ապահովութեան Խորհուրդին, Ռուսիոյ նախագահ Վլադիմիր Փութին Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեյրի կ'ըսէր, թէ քննութիւնները պէտք է շարունակուին Իրաքի մէջ: Պլեյրի հետ հեռաձայնային հաղորդակցութեան մը ընթացքին, Փութին շեշտեց անիրաւի շարունակելու քննութիւնները շարունակելու մնայով Ապահովութեան Խորհուրդին որոշումներուն գործադրութեան շրջագիծէն ներս: Փութին ըսած է նաեւ, որ միջապային ընտանիքին մտահոգութիւններն ու մտավախութիւնները փարատելու համար, դիւանագիտական ճիգերը պէտք է շարունակուին: Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութեան քանքեր Ալեքսանտր Եաքոբիւքով վերահաստատեց Ռուսիոյ այն կեցումները, որ կը պահանջէ անիրաւի չարտադրած ժամանակը տալ

քննիչներուն, որպէսզի ամբողջացնեն Իրաքի մէջ իրենց առաքելութիւնը: Բանքերը ըսաւ, որ միայն քննիչները կրնան հաստատում կատարել Իրաքի հաւաքական վեներուն մասին: Ապահովութեան Խորհուրդի մնայուն այլ անդամ՝ Բրիտանիոյ վարչապետ Թոնի Պլեյրի քանքերը ըսաւ, որ Լոնտոն կը պահանջէ, որ Իրաք ամբողջութեամբ ենթարկուի Ապահովութեան Խորհուրդի թիւ 1441 բանաձեւին: Բանքերը անեցուց. որ 12 տարիէ ի վեր, Իրաք կ'ոտնակոխէ միջապային ընտանիքն ու անոր տուած բոլոր որոշումները՝ պահելով հաւաքական քանդումի բոլոր վեները: Արտաքին գործոց նախարար ձեք Սթրո իր կարգին ըսաւ, որ ժամանակը կը սահի Սատամ Հիւսէյնի համար, եւ թէ ան անկապաղ պէտք է ենթարկուի ՄԱԿԻ պահանջներուն: Եւրոպական Միութիւնը իր կարգին պահանջ

Շար.՝ էջ 10

ԱՆԳԱՐԱ ԿՐ ՎԱՐԷ ԵՐԿԴԻՄԻ ԲԱՂԱՔԱԿԱՆՈՒԹԻՒՆ ՍԸ ԿԻՊՐՈՍԻ ՆԿԱՏԱՍՐ

ՆԻԿՈՍԻԱ, 27 (ԱՅՓ).- Թուրք բարձրաստիճան հրամանատար մը Երկուշաբթի օր պոլուշացուցած է, թէ Կիպրոսի վերամիացման համար մշակուած ՄԱԿԻ մէկ ծրագիրը կրնայ ապահովական վտանգներ ներկայացնել կղզիին եւ շրջանին համար, մինչ Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Եաշար Եաքքը վերահաստատած է թուրք կիպրացի ղեկավար Ռաուֆ Տենքթաշի հանդէպ իր պահանջները: «Գնահատուած է, թէ ՄԱԿԻ լուծման ծրագիրը կրնայ յանգիլ կղզիին վրայ 1963ի տագնապի մթնոլորտին եւ վերջ տալ թէ՛ կղզիին եւ թէ՛ արեւելեան Միջերկրականի մէջ ապահովութեան մթնոլորտին՝ Թուրքիոյ դէմ շրջանային հաստատութիւնները խանգարելով»: Ըսած է թրքական ցամաքային ուժերուն հրամանատար Կոր. Ալթաձ Եալման, հիւսիսային Կիպրոս ժամանուիւն առիթով մամլոյ ասուլիսի մը ընթացքին: Ան կ'ակնարկէր կղզիին երկու համայնքներուն միջեւ արձանագրուած բախումներուն, որոնց շարքորած էր 1974ին Թուրքիոյ կողմէ հիւսիսային Կիպրոսի գրաւումը՝ յոյն կիպրացիներու կողմէ պետական հարուածէ մը ետք, որուն նպատակը կղզիին Յունաստանի միացնել էր: Թրքական բանակը, որ շուրջ 30 հազար ուժ կը պահէ կղզիին վրայ, պիտի շարունակէ իր սեփական եւ թուրք կիպրացիներու շահերուն սկիւն, յայտարարած է Եալման երկօրեայ իր այցելութեան սկսման առիթով: «Կ'ուզեմ, որ ամէն մարդ գիտնայ, թէ թրքական պիւնակ ուժերը պիտի չարտօնեն որեւէ քայլ, որ կրնայ խանգարել կղզիին եւ արեւելեան Միջերկրականի խաղաղութիւնը, պիտի պաշտպանեն Թուրքիոյ իրաւունքները եւ պիտի շարունակեն կատարել իրենց պարտաւորութիւնները», ակեցուցած է ան: Թուրք պիւնակներ շեշտած է, որ հիւսիսային Կիպրոսի «գերիշխանութիւնը» պէտք է ճանչցուի, հասնելու համար «մնայուն եւ արդար խաղաղութեան մը»:


«Այլապէս, անխուսափելի պիտի ըլլայ արեւելեան Միջերկրականի մնայուն տագնապի մը մէջ մխրճուիլը», պոլուշացուցած է Եալման: Միւս կողմէ, Եաքքը, որ նոյնպէս հիւսիսային Կիպրոս կ'այցելէ, ամբողջական պարակցութիւն արտայայտած է Տենքթաշի՝ հերքելով, թէ տարակարծութիւն գոյութիւն ունի Անգլաքայի եւ Տենքթաշի միջեւ: «Կարավարութիւնը ուժեղ կերպով պարակցի»

Շար.՝ էջ 10

ԻՍՐԱՅԷԼ ԱՅԻՆԵՐԸ ԱՅՍՕՐ ՊԻՏԻ ԸՆՏՐԵՆ ԵՐԿՈՒ ՉԱՐԵԱՅ «ՓՈՔՐԱ ԳՈՅՆԸ»

Իսրայէլացի քուէարկողները այսօր կ'ուղղուին քուէարկութեան կետերը՝ ընտրելու համար նոր վարչապետ մը եւ Բնեմեթի 120 անդամներ: Բոլոր նախատեսութիւններուն համաձայն, վարչապետ Արիէլ Շարոն դիւրութեամբ պիտի վերընտրուի՝ պարտութեան մատնելով Աշխատանքական ղեկավար Ամրամ Միցնան: Ըստ նախատեսութիւններու, Շարոնի ղեկավարած Լիքուդը մտատարապէս 33 աթոռ պիտի պահուի, իսկ Աշխատանքական Կուսակցութիւնը՝ 18 - 19 աթոռ: Աթոռներու կարելորթի մը պիտի ապահովէ ոչ կուսական Շինուի կուսակցութիւնը,

կը գրեթէ ապահովուած կը նկատուի, սակայն դէտեր նկատել կու տան, որ իետ ընտրութիւններու հանգրուանին դժուար պիտի ըլլայ կառավարական ընկերակցութիւնը մը կապուելու աշխատանքը, որովհետեւ Միցնա կը պնդէ, որ մաս պիտի չկապուի Շարոնի վարչապետութեան մը: Բաղաքական հարցերու մեկնաբաններ կ'ըսեն, որ եթէ Աշխատանքական Կուսակցութիւնը նուազագոյնը քսան աթոռ չապահովէ, Միցնա պիտի չի արժանանայ կուսակցութեան ղեկավարութեան:



Ամրամ Միցնա

Ընտրութիւններու նախօրեակին, Իսրայէլ ամբողջական փակուումի ենթարկեց պաղեստինեան շրջանները: Կիբուցի գիշերը սկսեալ փակուեցան Իսրայէլը Կապալի եւ Այր-Նորդանան ի միացնող բոլոր անցքերը: Փակուեցան նաեւ սահմանները Եգիպտոսի եւ Յորդանանի հետ: Անցքերն ու սահմանները փակուին մնայուն միջեւ Աղաղ առտու: Միւս կողմէ, «Ուշինկընդի Փոսթ» երէկ իրապարակեց տեղեկագիր մը, ուր կը նշուէր, թէ ամերիկացի նուիրատուներ ակնիքան մէկ միլիոն տոյար յատկացուցած են ֆոնտերուն, որոնք պորպիզ կը կանգնին Շարոնի քաղաքական գործունէութեան: Յատկացումները կատարուած են երկու տարի առաջ, Շարոնի ընտրութիւններէն առաջ: Օրաթերթը անեցուց, որ տեղեկագիրը պատճառ դարձած է, որ Իսրայէլի ընտանուր դատախազը հետաքննութիւն մը քանայ՝ ստուգելու համար իրականութիւնը: (ԱՅՓ)



Արիէլ Շարոն

Կոր կ'առաջնորդէ Թոնի Լափիտ: Շարոնի յաղթանակը

ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ԱՆԵԼԻ ԿՐԱՆ ՄԱՏՆԵԼ ԱՐԳԷՆ ԻՍԿ ԽԱՐԽԱՓՈՂ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅՐ

ԷՁ 3

ՆԱԽԱԳԱՀ ՔՈԶԱՐԵԱՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՈՒՆԵՑԱԻ ՏԱԻՈՒՇՑԻՆԵՐՈՒՆ ՀԵՏ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան իր նախընտրական քարոզարշաւի ծիրէն ներս երէկ այցելեց Տաւուշի մարզ: Քոչարեանի կ'ընկերակցէին իրեն գորակցող կուսակցութիւններէն ներկայացուցիչներ: Տաւուշի մարզը 170 քմ. սահման ունի Ազգայնական հետ եւ իր օսմանամբ շրջան ենթակայ է յատուկ ուղարկութեան: Տաւուշցիներու հետ առաջին հանդիպումը կայացաւ Բերդ քաղաքին մէջ: Նախագահ Քոչարեան խօսեցաւ շրջանին համար նախատեսուած ճանապարհաշինութեան, դպրոցաշինութեան եւ աշխատատեղերու ստեղծման նպատակով ծրագրերներու մասին: Ռոպէրթ Քոչարեան հանդիպումներ ունեցաւ նաեւ Թովուզ, Պառաւաքար, Վարազաւան, Վազաշէն եւ Ազատամուտ գիւղերուն մէջ: Ազատամուտի մէջ, Հ. Յ. Դ. Բերդոյի անդամ Վահան Յովհաննիսեան նշեց, որ Հ. Յ. Դ., ինչպէս 1998ին, նաեւ հիմա կ'աջակցի Ռոպէրթ Քոչարեանին, նախեւառաջ այն պատճառով, որ ան ժողովուրդին հետ անցած է «մուծի, խաւարի, սովի ու ցուրտի ծանր օրերէն»:

Բազմամարդ հանդիպում մը տեղի ունեցաւ նաեւ Իջեւան քաղաքին մէջ: Քոչարեան պատասխանեց աշխատատեղերու ստեղծման եւ Իջեւանի գրասարձակին գօտիին վերաշինութեան առնչութեամբ տեղւոյն բնակչութեան հարցումներուն:

ԿՈՎ ԿԱՄԵԱՆ ՔԱՌԵԱԿԻ ՀԱՆԴԻՊՈՒՄ

ԱՊՀ-ի անդամ պետութիւններու ղեկավարներու չորրորդ ոչ պաշտօնական վեհաժողովը տեղի պիտի ունենայ 28-29 Յունուարին, Քիբեի մէջ: Վեհաժողովին ընթացքին նախագահները պիտի շարունակեն ԱՊՀ-ի ծիրէն ներս համագործակցութեան հետազայ, յատկապէս տնտեսական վարգսցման առնչուող հարցերու քննարկումը: Ռուսիոյ նախագահի աշխատակազմի ղեկավարի տեղակալը յայտնած է, թէ վեհաժողովի ծիրէն ներս կը նախատեսուի գումարնէլ «կովկասեան քառեակի» Հայաստանի, Արարչիանի, Վրաստանի եւ Ռուսիոյ նախագահներու ընթացիկ հանդիպումը: Պիտի քննարկուի ընդհանրապէս Հարաւային Կովկասի իրավիճակը: Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան 28 Յունուարին պիտի մեկնի Ուքրաինա, մասնակցելու համար նշեալ հանդիպումներուն:

ԱՐԱՄ Ա. ԿԱԹՈՂԻԿՈՍ ԸՆԴՈՒՆԵՅ ՀՈՒՆԳԱՐԻՈՅ ԳԵՍՊԱՆԸ

Ն. Ս. Օ. Տ. Տ. Արամ Ա. կաթողիկոս երեկ վեհարանին մէջ ընդունեց Լիբանանի մէջ Հունգարիոյ դեսպան Փայ Ֆայիանը: Ծորջ ժամ մը տեւող հանդիպումը առիթ հանդիսացաւ քննարկելու քաղաքական կացութիւնը շրջանային ու միջազգային մակարդակի վրայ: Դեսպան Ֆայիան եկած էր նաեւ խորհրդակցելու վեհապետ հայրապետին հետ Հունգարիոյ հայ համայնքին կապուած կարգ մը հարցերու շուրջ:

Հանդիպման ընթացքին նաեւ շեշտուեցան Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսութեան կատարած միջեկեղեցական եւ միջկրօնական աշխատանքները:

ՇՐՋԱՆԱՅԻՆ ՏԱԳՆԱՊՆԵՐԸ ՊԵՏՔ Ե ԼՈՒԾՈՒԻՆ ԱՊԱՇՆՈՎՈՒԹԵԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻՆ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՆ ԾԻՐԻՆ ՍԵՋ

Կ'ԸՍԵ ԶՕՐ. ԼԱՀՈՒՏ

Չօր. Ըմիլ Լահուտ երեկ հաստատեց, որ շրջանային տագնապները, որոնց շարքին՝ Իրաքի հարցն ու պաղեստինեան տագնապը, լուծելու յարմարագոյն ծիրը ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդին տուած որոշումներն են:

Պապատայի նախագահական պալատ այցելող երեսփոխաններ, ԿՕՐ. Լահուտ մէջբերելով, քսին, որ Լիբանան հաստատ կը մնայ իր կեցածքներուն վրայ՝ շրջանային տագնապներուն նկատմամբ, եւ թէ այս հանգրուանին անհրաժեշտ է շարքեր միացեալ պահել ու ամրապնդել գործակցութիւնը, որպէսզի կարելի ըլլայ դիմագրաւել մարտահրաւերները:

Նախագահ ԿՕՐ. Լահուտ երեկ Պապատայի նախագահական պալատին մէջ ընդունեց շարք մը երեսփոխաններ եւ նախարար Ֆուատ Սասունը:

ԱՇԽԱՏԱՆՈՐԱԿԱՆ ՀԱՄԱՐԱՆՈՐԿԱՆ ԿԸ ԶԳՈՒՇԱՅՆԷ

Աշխատանքական Ընդհանուր Համադաշնակցութիւնը երեկ կոչուեցաւ Ընդհանուր Ապահովագրութեան Ազգային Միտուկը փակելու ժամական հետեւանքներէն:

Ծանօթ է, որ պետութիւնը 25 առ հարիւրով կ'օժանդակէ սնտուկին առողջապահական ծառայութիւններուն, եւ եթէ կառավարութիւնը որոշէ ջնջել օժանդակութիւնը, սնտուկը կը դադրի գործելէ:

Հրապարակուած յայտարարութեամբ մը, Համադաշնակցութիւնը պահանջեց առողջապահական ընդհանուր քաղաքականութեան մշակում, տնօրէնութիւնը արդար դրութիւն եւ սեփական շարժումներու ուղղուող հաստատութիւններու պաշտօններուն եւ աշխատանքներուն իրաւունքներու սպառնալու:

ՊԵՏԱԿԱՆ վարձարաններու մէջ պայմանագիրով աշխատող ուսուցիչները երեկ հաստատեցին, որ պիտի շարունակեն բաց գործադուր, մինչեւ իրենց բոլոր պահանջներուն գործադրութիւնը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՆ ԴԱՍՏԱՎՈՍ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Սուրիայում Հայաստանի Հանրապետության դեսպանութիւնը տեղեկացում է, որ 18 տարին լրացած այն ՀՀ քաղաքացիները, որոնք բնակուած կամ ժամանակաւորապէս գտնուած են Սուրիայում կամ Յորդանանում, կարող են Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւններին մասնակցելու իրենց քաղաքացիական իրաւունքն իրականացնել Սուրիայում Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնում կամ Հայէպում Հայաստանի Հանրապետութեան գլխաւոր հիւպատոսութիւնում, ուր, համաձայն գործող կարգի, կապուածուել են ընտրական տեղամասեր:

Քուէարկելու համար ընտրողները Հայաստանի Հանրապետութեան նախագահի ընտրութիւնների օրը՝ 2003 թ. օգոստոսի 19-ին, առաւօտեան ժամը 8:00-ից մինչեւ երեկոյեան 20:00-ի ընթացքում պէտք է ՀՀ քաղաքացիական անձնագրերով ներկայանան ՀՀ դեսպանութիւն/հասցեն՝ Դամասկոս, Մեկու Շարքիա, Շաֆիի փողոց 13/ կամ ՀՀ գլխաւոր հիւպատոսութիւն/Հայէպ, Էլ Բա-վաքիբի 4, Տաիա Հիւսէյն 12/:

Լրացուցիչ տեղեկութիւնների համար պահագահարել՝ 011-613-0952 /Դամասկոս/ 021-268-7240 /Հայէպ/

ՍՈՒՐԻՈՅ ԱՐԱՄԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԻ ՎԵՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ԴԵՍՊԱՆՈՒԹԻՆ

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԻՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՆԱԽԱԳԱՀԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԱՆ, ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՒ ԱՆՅԿԱՅՄԱՆ ԿԱՐԳԸ

Լիբանանում Հայաստանի Հանրապետության դեսպանութիւնը տեղեկացում է, որ Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրութիւնների նախապատրաստման եւ անցկացման ընթացքում Լիբանանի Հանրապետութիւնում բնակուող կամ գտնուող, ընտրական իրաւունք ունեցող Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները կարող են մասնակցել ընտրութիւններին Հայաստանի Հանրապետութեան ընտրական օրէնագրով եւ Կեդրոնական Ընտրական Յանձնաժողովի որոշմամբ սահմանուած կարգով:

Լիբանանում Հայաստանի Հանրապետության նախագահի ընտրութիւնները նախապատրաստում, կապուածուելու եւ անցկացնում է Հայաստանի Հանրապետութեան դեսպանութիւնը:

Լիբանանում Հայաստանի դեսպանութեան հիւպատոսական բաժնում հաշուառուած Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները ներառուած են ընտրացուցակում, որին կարելի է ծանօթանալ Լիբանանում ՀՀ դեսպանութեան հիւպատոսական բաժնի ընդունարանում: Լիբանանում բնակուող, կամ գտնուող Հայաստանի Հանրապետութեան քաղաքացիները, որոնք ներառուած չեն յիշեալ ցուցակում, ընտրութիւններին մասնակցելու համար մինչեւ ս. թ. Փետրուարի 15-ը հրապարակուած են Լիբանանում Հայաստանի դեսպանութիւն /հասցէ՝ 28 Rue des Jasmins, Mtayleb, հեռ.՝ 04-418860/ ընտրողների ցուցակում ընդգրկուելու յայտ ներկայացնելու համար: Յայտում պէտք է նշուի ընտրողի ազգանունը, անունը, ծննդեան օրը, ամիսը, տարին, անձնագրի համարը, ժամանակաւոր եւ մշտական բնակութեան վայրերը (հասցէները): Ստացուած յայտերի հաշուառման հիման վրայ կապուելու են ընտրողների վերջնական ցուցակները:

Լիբանանում Հայաստանի Հանրապետության դեսպանութեան շէնքում կապուածուելու է տեղամասային ընտրական կենտրոն, ինչպէս նաեւ տեղամասային ընտրական յանձնաժողով:

Լիբանանում Հայաստանի Հանրապետության նախագահական ընտրութիւնների քուէարկութիւնը անց է կացուելու Հայաստանի Հանրապետութեան Ընտրական օրէնագրով սահմանուած կարգով՝ տեղամասային կենտրոնում:

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՍՊԱՆՈՒԹԻՆ

ԿՈՒՉՈՒԻՆ
Սեուտական Արաբիոյ մէջ աշխատելու համար.
●Սթէյնլըս սթիլ սառնարաններ շինողի մը:
●Սթէյնլըս սթիլ փուռեր շինողի մը:
●Փորձառու վարպետներու, որոնք կրնան վերակազմել պարտակազմութիւն ստանձնել: Տարիք՝ 35-էն 45-ի միջեւ: Վճարման լաւ պայմաններ: Դիմել՝ պր. Խսամին, հեռ.՝ 01-801454, 01-867919, քի.՝ 801 սեմեակ:

ՎԱՆԻԱ ԼԵՊԼԵՊՃԵԱՆ ԸՆԴ 3ՈՎԻԿ ԱԹԱՔԵԱՆ ՆՀԱՆՈՒՄ 25 Յունուար 2003 Պէյրուք

«ԱԶԳԱԿ» ԳՈՐԾԻՆ
●Իպրահիմ Աուհի մահուան առիթով, Տիար Մանուէլ Գազաճեան 20,000 Լ. ռ.

ԿՈՒՉՈՒԻ
●Շաստատութիւն մը կարիքը ունի երիտասարդ փորձառու քարտուղարուհի մը: Լաշ-լապահութիւն եւ համակարգիչ գիտնալը պայման:
Ետաքըքրուողները կրնան դիմել՝ ամէն օր առաւօտեան ժամը 9:00-էն 4:00: Ետ.՝ 01-258018 եւ 01-257235 քիւերուն:

ՀԱՂՈՐԳԱԳՐՈՒԹԻՒՆ
Ս. թ. Յուլիսի 1-3-ը Երեւանում կայանալու է Հայաստանի բժշկական պաշտի միջազգային խորհրդածողովը Հայաստանի, Արցախի եւ Սիւիզի առողջապահութեան բնագաւառի ներկայացուցիչների մասնակցութեամբ:
Խորհրդածողովի մասնակցութեան հրաւերը աշխատանքային ծրագրի, քննարկութիւնը հարցերի շուրջ եւ այլ մանրամասն տեղեկութիւններ ստանալու համար դիմել Լիբանանում Հայաստանի դեսպանութիւն՝ Հասցէ՝ 28 Rue des Jasmins, Mtayleb Հեռ.՝ 04-418860

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳԵՍՊԱՆՈՒԹԻՆ

Հովանաւորութեամբ
Ն.Ս.Օ.Տ.Տ. ԱՐԱՄ Ա. ՎԵՀԱՓԱՌԻ
Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ
ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԸ
Կը ներկայացնէ՝



«ՎՈՍԻՏՍՍ» ՔԱՆԵԱԿԸ

Շարաք, 1 Փետրուար 2003, երեկոյեան ժամը 8:30-ին, Ամերիկեան համալսարանի «Էսեմպլի Հոլ»-ին մէջ:
Տոնները պիտի Գրապրուն Նարեկացիէն, Համազգայինի գրախանութէն, «Լ. Շանք» կեդրոնէն եւ կամ հեռախօսակցի 01/258300 քիւին:

Banque Audi BYCOP GARDEN TOWER SUITE HOTEL GULBENG CORP.

ՕՐԻՆԱԿԵԼԻ ԿԵՅՈՒՄԸ
(«ԱՐԱՐԱՏ» ՖԻԼՄԻ ԶՈՒՅԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՌԻԹՈՎ)
23 Յունուար 2003-ին, «Փլանէթ Ապրիլ» եւ «Փլանէթ Չուր» շարժապատկերի սրահներուն մէջ սկսաւ ցուցադրուիլ Արամ Էկոյեանի «Արարատ» ֆիլմը: Ծանօթ է, որ 21 Յունուարին տեղի ունեցաւ ֆիլմին ցուցադրութեան պաշտօնական բացումը, նախաձեռնութեամբ՝ Հ.Յ.Դ. Լիբանանի Հայ Դատի Մարմինին եւ հովանաւորութեամբ՝ խորհրդարանի փոխ նախագահ Էլի Յարպիլի: Այս մասին օրին «Ազգակ» անդրադարձաւ համապարփակ ձեւով:
Լիբանանի Հայ Դատի Մարմինը անցնող քանի մը շաբաթներուն այս իմաստով ծաւալեց նաեւ քարոզչական մեծ աշխատանք, որուն ակնատեսն ու ակնաշարար եղաւ մեր ժողովուրդը: Օրին, քսինք ու հաստատեցինք, որ այս ֆիլմին յաջողութիւնը Լիբանանի մէջ պայմանաւորուած է մեր ժողովուրդին ամբողջական մասնակցութեամբ, ըլլալ ներկայութեան, ըլլալ քարոզչական առումով:
Այսօր, հպարտօրէն կ'արձանագրենք, որ մեր ժողովուրդը անգամ մը եւս տեղը կանգնեցաւ իր կոչումին եւ ցոյց տուաւ բարեկամին թէ թշնամիին, որ Հայ Դատի պահանջատիրութեան երթին մէջ ինք կը մնայ իր հարապատ պատուանդանին վրայ:
Այո՛, երեկ երեկոյեան «Իթալիա Ֆիլմ» ընկերութիւնը փոխանցեց, թէ «Փլանէթ Ապրիլ» եւ «Փլանէթ Չուր» սրահներուն մէջ անցնող Հինգշաբթի, Ուրբաթ, Շաբաթ եւ Կիրակի օրերուն, այլ խօսքով, միայն չորս օրերու ընթացքին ներկայ գտնուած է 5050 հանդիսատես, առանց նկատի առնելու բացման պաշտօնական ձեռնարկը, որուն ներկայութիւնը կ'անցնէր 400-ի սահմանը:
Այսքանը սակայն բարարաք չէ, այս օրինակելի կեցուածքը պէտք է դառնայ համակող եւ գտնեպնդող: Արդէն իսկ այս շաբթուան ընթացքին բազմաթիւ միութիւններ եւ վարժարաններ սպառնալով մեծ ցուցարահները եւ աշխատանք կը տանին, որ պիտի լեցնեն ամբողջական ձեւով: Մեր ուսանողները համալսարանական միջավայրերու մէջ կը տանին քարոզչական յայն աշխատանք: Անցնող օրերուն կարգ մը միութիւններու համար մէկ կամ երկու սրահները նեղ եկան ու անոնք նոյն օրուան համար պարտաւորուեցան սպառնալու նաեւ երրորդ սրահ մը: Այս ընթացքը պիտի շարունակուի անտարակոյն:
Լիբանանեան գրաւոր ու բանաւոր մամուլը յայտնուեցաւ անորադարձաւ ու կը շարունակէ անորադարձաւ ու արձագանգել ֆիլմին մասին՝ հաստատելով, որ հայ համայնքին ներկայութիւնը Լիբանանի մէջ յաւելեալ գրաւական մըն է ֆիլմի յաջողութեան: Պարտաւոր ենք, իւրաքանչիւրս նաեւ ստանձնելու յստակ դերակատարութիւն՝ մեր շրջապատին մէջ տեղեկելու վարակիչ մթնոլորտ, որպէսզի արաք կամ օտար մեր բոլոր բարեկամներուն հետաքրքրութիւնը շարժենք ու վանտեցնենք արաք առաջդրողներէն:
Մինչ այդ սակայն, անգամ մը եւս յարգաւոր լիբանանահայութեան այս օրինակելի կեցուածքին:

Յ. ՀԱՄԱԹԵԱՆ
ԳՐԱՒՈՒՄԸ ՕՐ
Շ. Յ. Դ. ԴՐՈ ԱՎՈՒՄԻ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ 3 ՄԱՅԻՍ 2003

ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ
ԱՃՃԵԱՆ ԹՈՒՐԸ Լիբանանի, Սուրիոյ եւ Յորդանանի հայ համայնքներուն կը յայտնէ, որ այն կոչը, որ հաղորդագրութեամբ մը յայտարարած էր հայկական օրաթերթերու մէջ՝ Հայաստանի համար, չեղեալ կը համարուի: Մեր շրջապատյունները տեղի պիտի ունենան նոյն թուականներուն, Պէյրուքէն 2-9 Մայիսին, իսկ Լաշլաքէն 4-11 Մայիսին: Գին փոխան 555\$ միայն 333\$, իսկ 15 օրը փոխան 850\$ միայն 450\$, 12-16 Փետրուար փոխան 380\$ միայն 195\$:
Ետ.՝ 01-240654, 03-233978 եւ 01-261177:
ԱՃՃԵԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՏԵՐ ԵՒ ՏՆՕՐԵՆ 3. ԱՃՃԵԱՆ

ASHJIAN TOURS
ԱՆՇԱՏԱՆԻ ԱՅՅ ԻՐԱՎ ԾՐԱՊԱՅՆՆԵՐ
1.- Ս. Մարգարիտ, Տեառնոյնայի, Տե. Վալենտինոսի եւ ճաւ Ատիա տներուն առիթով 12-էն 16 Փետրուար, դէպի Կիպրոս Լիւսաոյ քաղաքը, Քոթոս 3 աստղանի պանդոկ, 5 օր փոխան 380 տոլարի միայն 195 տոլար: Իսկ 7 օրը միայն 225 տոլար, իսկ Apollonia շէր 5 աստղանի պանդոկը փոխան 465 տոլարի միայն 280 տոլար. 7 օրը 325 տոլար:
2.- 2-էն 9 Մայիս Հայաստան «Երեւոնի» Ա. կարգ պանդոկ, փոխան 555 տոլարի միայն 333 տոլար: Նախաձայն, բաց պիւլիտով, շատ սահմանափակ տեղեր:
3.- 19-էն 24 Ապրիլ Եւրոպ, Տիւր Չօր, Մարկառ, Կապի, Քամիլի, Թոմոք, Դամասկոս շէր պանդոկներ, երկու գիշեր Եւրոպ, երկու գիշեր Տիւր Չօր, անակազմներ. յիշատակի նուրբներ. գին՝ 145 տոլարէն սկսեալ. ճաւ ձիւ վրձնակառուցութիւն:
Արձանագրութիւն՝
ASHJIAN TOURS
Ետ.՝ 01-240654, 03-233978 եւ 01-261177:
Sales Agent for ARMENIAN AIRLINES

ԱԿՆԱՐԿ

ԻՍՐԱԵԼԵԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ՈՒՂՂԱԿԻ ԱՆԵԼԻ ԿՐՆԱՆ ՄԱՏՆԵԼ ԱՐԴԷՆ ԻՍԿ ԽԱՐԽԱՓՈՂ ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

Շուրջ 4,7 միլիոն իսրայելացիներ (հրեայ եւ արաբ) այսօր պիտի ուղղուին քուէատուփ՝ ընտրելու 1948էն ի վեր (իսրայելեան պետութեան հռչակում) իրենց 16րդ Քնեսէթը (խորհրդարան), որ կը հաշուէ 120 անդամ: Սկզբունքով այս ընտրութիւնները պէտք է կատարուէին յառաջիկայ Նոյեմբերին, սակայն Արիէլ Շարոն յառաջադրեց թուականը, որովհետեւ անոր կուսակցութիւնը՝ Լիքուտը մէկ կողմէ կատարաւորութեան մէջ հարցեր կը դիմագրաւէր աշխատատեղերէն հեռու, միւս կողմէ՝ մեծամասնութիւն չունէր խորհրդարանին մէջ: Իսկ հիմա յարմար առիթն է օգտուելու շրջանային իրավիճակէն, յատկապէս Իրաքի հարցէն, որուն իրարանցումին մէջ ո՛չ Ուաշինկթըն, ոչ ալ այլ մեծեր պիտի միջամտեն ընտրութիւններուն, ընդհակառակն, անոնք աչք պիտի փակեն նոյնիսկ խախտումներու պարագային, պարզապէս որովհետեւ պէտք ունին դաշնակից Իսրայելի օժանդակութեան՝ Իրաքի դէմ պատերազմի մը համար, որուն ոտնաձայնը կը լսուի արդէն... Եւ այս տակնուվրայութեան մէջ Շարոն ինչէ՞ր պիտի չթափէ պաղէստինցիներուն գլխուն: Չենք մոռցած նաեւ անոր սպառնալիքները՝ ուղղուած Լիբանանի, յատկապէս Հըզպալլայի: Հրեայ ղեկավարին սպառնալիքներէն անմասն չի մնար նաեւ Սուրիան, որ իբրեւ թէ կ'օժանդակէ «սահաբէկի»ներուն, որոնց նկատմամբ այնքա՛ն ալեքի կայ այս օրերուն, մասնաւոր Արեւմուտքի մէջ: Պէտք չէ ուրանալ, որ ի սկզբանէ հրեաները վարպետ եղած են թայմինկի իմաստով, ճարպիկ եղած են պղտոր ջուրի մէջ ձուկ որսալու: Ահաւասիկ ըսուածին յաւաքոյն փաստը կու տայ վարչապետ Շարոն:

Ըստ հարցախոյններուն՝ Քնեսէթին մէջ Լիքուտ, Կոր կը գլխաւորէ Արիէլ Շարոն, պիտի ապահովէ 32 - 33 տոտ, իսկ անոր աւանդական մրցակիցը՝ աշխատատեղերէն հեռու երկխոսութեան համամիտ՝ Հայֆայի նախկին քաղաքապետ Ամրամ Միցնա, պիտի ապահովեն միայն 18 - 19 տոտ: Սակայն որեւէ որոշումի պարագային, տնհրածեշտ 61 քուէ ապահովելու հասար բնականաբար յաղթականը կարիքը ունի դաշնակիցներու: Հոս եւս այս անգամ կրնան ըլլալ ուշագրաւ վերիվայրումներ: 28 քանկերէն միայն 15ը հաւանաբար կարենան հասնիլ խորհրդարան, իւրաքանչիւրը քանի մը երեսփոխանով, բան մը, որ կը դժուարացնէ անշուշտ յաղթականին, այս պարագային՝ Լիքուտի, Շարոնի գործը: Դարձեալ ըստ նախատեսութեանց՝ երրորդ դիրքը շուրջ 15 տոտով կրնայ գրաւել ձախակողմեան լայիք կուսակցութիւն մը՝ Շինուի (Մերեցի մէկ թերթ), որ ռիւերիմ թշնամին է Օւրալայեղ Ուղղափառներուն (Շաս): Շարոն պիտի կարենայ՝ Թովի Լափիտի (Շինուիի ղեկավարը) հետ լեզու գտնել. յառաջիկայ օրերը ցոյց պիտի տան:

Բոլոր պարագաներուն ալ, սակայն, քաղաքական ընթացքը շրջանային իմաստով յոռետեսութեան կը մղէ: Վերը նշուած ընտրական հաշիւները, ընտրական հողովոյթը քանի մը օրէն կը հարթուին գէշ - աղէկ, բայց հիմնահարցը՝ պաղէստինեան թղթածրարը կը մնայ անլուծելի: Խաղաղութեան գործընթացը այս ձեւով կը մատնուի անելի. արդէն անիկա կը խարխափէր, իսկ հիմա, երբ ըստ երեւոյթին Շարոն՝ բիրտ ուժին հաւատացող ղեկավարը, կատարաւորութեան կողքին նաեւ Քնեսէթին տերը պիտի դառնայ, բնականաբար անիմաստ է նոյնիսկ յիշել «խաղաղութեան գործընթաց» ելքը: Այս բոլորին դիմաց ի՞նչ կը մնայ պաղէստինցիներուն, եթէ ոչ շարունակել պայքարը, պինեալ պայքարը՝ շարունեան արևմտաբար քաղաքականութեան դէմ: Հաւանաբար պաղէստինցիք տակաւին բազմաթիւ զոհեր, նահատակներ տան, որուն պատրաստ են ամենեւին: Սակայն նոյնքան զոհ կրնայ տալ Յահալը (իսրայելեան բանակը), նոյնիսկ եթէ անիկա շատ աւելի լաւ կազմակերպուած ու շատ աւելի

լաւ պինուած է: Երեւոյթ մը, որ ի վերջոյ պիտի մղէ Իսրայելի հանրային կարծիքը՝ պոռթկալու իր իսկ իշխանութեան դէմ, հաշիւ պահանջելու իր տուած զոհերուն համար, ուղղելու պարզ ու տրամաբանական հետեւեալ հարցումը. վասն ինչի՞:

Այո՛, վասն ինչի՞: Պաղէստինցիներէք հարց չունի զոհ տալու: Ան երդուած է իր կեանքին գնով պաշտպանել իր սեփական հողը, իր դատը: Ապտագրական պայքար մղող ժողովուրդներուն համար կեանքը սուղ չէ, հետեւաբար մահը սովորական երեւոյթ է: Մինչդեռ նոյնը չէ բռնագրաւող ուժին համար, ուր չկայ իտէլալ, նուիրում, յանուն հայրենիքի, յանուն իրաւունքի մարտնչում, այլ՝ ոճիր, թալան, քանդում, որուն ընթացքին պիտի տրուի գերզգուշ է, վախկոտ է, ողջ մնալու հապար հաշիւ պիտի ընէ, հետեւաբար պիտի պարտուի, պիտի հրաժարի, դասալիք պիտի դառնայ:

Ուստի, Իսրայելի համար չկայ այլընտրանք երկխոսութեան: Անոր կը մնայ ընդունիլ պաղէստինեան անկախ պետութեան մը գոյութիւնը, հատուցել պաղէստինցի ժողովուրդին, ապա նաեւ արաբական աշխարհին բոլոր իրաւունքները եւ անյապաղ դիմել բարիդրացնութեան ընտրանքին: Այլապէս միակ տուժողը պիտի ըլլայ ի՛նքը՝ Թէլ Աւիւր, իր աշխատատեղական, լիքուտեան թէ այլ դիմագիծով հաւասարապէս (միեւնոյնն է՝ հրէական բոլոր հոսանքներն ալ կը հետապնդեն սինական ամբողջատիրական երազը, առ այդ բոլորն ալ կը վարեն հակաարաբական քաղաքականութիւն), որովհետեւ իրաւատերը երբեք պիտի չդադրի իր արդար պայքարէն:

ՀՐԱՉ ՎԱՐԺԱՊԵՏԵԱՆ

ՔԱՐԱՄԷ, ՀԱՐՊ ...

Շարունակուած Ա. Էջէն

Մասին: Իսկ երեսփոխան Եասին Ժապէր նչեց, որ կառավարութիւնը ձախողեցաւ կասեցնել միստումը: Երեսփոխան Զաքի Զապիթէր անդրադարձաւ խորհրդարանին իր իրաւաստութիւններէն հրաժարելու երեւոյթին: Իսկ երեսփոխան Ֆարիտ Խազէն կողմէ պիտի չբռնէր: Երեսփոխան նիստին խօսք առին երեսփոխաններ՝ Սալէհ Նէյր, Նայլա Մուսուաա, Օմար Քարամէ, Պուրթուս Հարպ եւ Ալի Հասան Նալիլ: Երեսփոխաններ՝ Մուսուաա, Քարամէ եւ Հարպ քննադատեցին կառավարութեան քաղաքականութիւնը, խօսեցան բլիթային հեռաձայնի թղթածրարին շուրջ բարձրացած բանաձէճին, դատական իշխանութեան անկախութեան պահպանման, ազատութիւններու յարգումին եւ այլ երեւոյթներու մասին: Այսօրուան նիստին միակ խօսք առնողը պիտի ըլլայ խորհրդարանի նախկին նախագահ Հիւսէյն Հիւսէյնի, որմէ ետք երեսփոխանները պիտի անցնին պիտեճէի իւրաքանչիւր յօդուածի քուէարկութեան:

LOBI ՇՐՁԱՆԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹԻՒՆ Բեմադրիչ ԼԱՐԵԿ ՏՈՒՐԵԱՆ Լիբանանի մէջ կը ճերկայացնէ «WELCOME TO GLENDALE» կատակերգութիւնը 2 արարով



Ուրբաթ, 7 Փետրուար 2003, ԿԱԼԼԱ, Շաբաթ 8 եւ Կիրակի 9 Փետրուար 2003, երկուշաբթի 10-11, Կիրակի 9 Փետրուար 2003, ցերեկոյթ. կէսօրը ետք ժամը 4:00ին. «Յակը Տըր Մելքոնեան» քաղաքապետի մէջ: Տոստերը ստանալ՝ ԼՕԽ-ի շեքարուեստի խանութէն. Համազգայինի Գրատունէն. Anto Sport-էն. Longline Կատարութիւն - Վալէ Աղաճեան - Տալ Էլ Տիպ. Գրատուն Կոմիտաս - Zokak El Blat. ԼՕԽ-ի Շրջանային Վարչութեան Գրասենեակէն:

السوق البيق

ԻՆՉ ԿՐ ԳՐԵՆ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՕՐԱԹԵՐԹԵՐԸ

السفير النصار الذبيار المستقبل

Տեղական մամուլը իր 27 Յունուարի թիւով լուսարձակի տակ առած է բիւրջային թղթածրարին շուրջ շարունակուող բանավեճը, վարչապետ Հարիրի Մէլուտական Արաբիա այցելութիւնը, Հապիթի մէջ պատահած դէպքը, պաղէստինեան բռնագրաւեալ շրջաններուն մէջ իսրայելեան բռնարարները եւ իրաքեան հարցին վերջին վարզացումները:

«Պայրաք» գրած է, թէ նախարարաց խորհուրդը Չորեքշաբթի օր կը քննարկէ նախարար Բորտաիի կատարած մատնանշումները, ինչպէս նաեւ բիւրջայինի ապապետականացման խնդիրը: Ըստ թերթին, Ապտալի իշխանը դիմելու տայ, որ Մէլուտական Արաբիա կը կանգնի բոլոր լիբանանցիներուն կողքին, առանց բացառութեան եւ անոնցմէ կը պահանջէ միասնականութեան պահպանում:

«Նահար» նշած է, թէ կատարութեան Չորեքշաբթի օրուան նիստին օրակարգի վերջին կէտը պիտի ըլլայ բիւրջայինի պայմանագիրը: Ըստ թերթին, սեյուտական - լիբանանեան առեւտրական հանդիպումին ընթացքին Ռիատի կատարիչ շէյխ Սալման յայտարարեց, թէ Լիբանանի ուժը կը կայանայ իր պատկանելիութեան վրայ: «Տիար»-ի համաձայն, Յորդանան կը խոստանայ իսրայելը պաշտպանել իրաքեան իրթոններէն: «Պայրաք» գրած է, թէ Պլիքս եւ Պարատի կրնան տեղեկագիրները: Փարիզ եւ Դամասկոս կը պահանջեն յաւանաբար ընտրութիւնները: Ըստ «Նահար»-ի, Փաուրլ յայտարարած է, թէ Միացեալ Նահանգներ կը պահանջեն պաղէստինեան միացեալ պետութիւն մը:

«Պայրաք» գրած է, թէ Շարոն խաղաղութեան քարտէսը կրկին մէջտեղ կը հանէ աշխատատեղերէն համար: Ըստ թերթին, Եւրոպա կոչ կ'ուղղէ քննիչներուն՝ յաւանաբար, իսկ Փաուրլ կը յայտարարէ, թէ պատրաստ են առանձինն պատերազմի սկսելու:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Յորդանան կը խոստանայ իսրայելը պաշտպանել իրաքեան իրթոններէն: «Պայրաք» գրած է, թէ Պլիքս եւ Պարատի կրնան տեղեկագիրները: Փարիզ եւ Դամասկոս կը պահանջեն յաւանաբար ընտրութիւնները: Ըստ «Նահար»-ի, Փաուրլ յայտարարած է, թէ Միացեալ Նահանգներ կը պահանջեն պաղէստինեան միացեալ պետութիւն մը:

«Նահար» նշած է, թէ կատարութեան Չորեքշաբթի օրուան նիստին օրակարգի վերջին կէտը պիտի ըլլայ բիւրջայինի պայմանագիրը: Ըստ թերթին, սեյուտական - լիբանանեան առեւտրական հանդիպումին ընթացքին Ռիատի կատարիչ շէյխ Սալման յայտարարեց, թէ Լիբանանի ուժը կը կայանայ իր պատկանելիութեան վրայ: «Տիար»-ի համաձայն, Յորդանան կը խոստանայ իսրայելը պաշտպանել իրաքեան իրթոններէն: «Պայրաք» գրած է, թէ Պլիքս եւ Պարատի կրնան տեղեկագիրները: Փարիզ եւ Դամասկոս կը պահանջեն յաւանաբար ընտրութիւնները: Ըստ «Նահար»-ի, Փաուրլ յայտարարած է, թէ Միացեալ Նահանգներ կը պահանջեն պաղէստինեան միացեալ պետութիւն մը:

«Քիֆահ Արապի»-ի համաձայն, Յորդանան կը խոստանայ իսրայելը պաշտպանել իրաքեան իրթոններէն: «Պայրաք» գրած է, թէ Պլիքս եւ Պարատի կրնան տեղեկագիրները: Փարիզ եւ Դամասկոս կը պահանջեն յաւանաբար ընտրութիւնները: Ըստ «Նահար»-ի, Փաուրլ յայտարարած է, թէ Միացեալ Նահանգներ կը պահանջեն պաղէստինեան միացեալ պետութիւն մը:

ԵԹԷ

- Գործ կը փոստէք
- Գործաւոր կ'ուզէք

ԴԻՍԵՑԷ

Հեռ. 03-963499:

BARON
TRAVEL & TOURISM AGENCY

(SALES AGENT FOR ARMENIAN AIRLINES)

ՓԵՏՐՈՒՄ ԱՍՍՈՒՄԱՆ ՇՐՁԱՊՏՈՅՆՆԵՐ

- 9-13 Փետրուար SHARM EL SHEIKH 225 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 5 աստղանի պանդոկ)
- 13-17 Փետրուար SHOPPING IN PRAGUE 490 \$ (4 գիշեր + 5 ցերեկ, 4 աստղանի պանդոկ)
- DUBAI (2 գիշեր + 3 ցերեկ) 290 \$ ԵՆ սկսեալ

ՎՃԱՐՄԱՆ ԴԻՐՈՒԹԻՒՆ

Յաւելեալ մանրամասնութիւններու համար դիմել՝ BARON TRAVEL, Պորճ Համուտ, Մարաշ քաղ, հեռ. 01-263624, 01-241344 եւ 03-275657 փոստով:

ՎՕՏ ՕՐԵԼ ՎՕՏ ՕՐԵԼ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ «ՌՈՒԲԷԼ ԶԱՐԿԱՐԵԱՆ» ՄԱՍՆԱՃԻՒՂ

ՆՈՒԱՆ ԵՐԳԸ

Աշուղական երգերու ամփոփ սկաւառակը (CD) Սեկնարանութեամբ՝

ԷԼԻ ՊԵՐՊԵՐԵԱՆԻ ՇԱԸՔ ՊԱՂՏԱՍԱՐԵԱՆԻ ԵՎ ՄԱՆՈՒԿ ՄԻՆԱՍԵԱՆԻ



IGOL MOTOR OIL FUEL CARD

ԳՈՐԾԱԾԵՅԷՔ FUEL CARDԸ ՏՆՏԵՄԱԿԱՆ ԾՐԱԳԻՐՆԵՐՈՒ ՅԱԶՈՂՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

Յաւելեալ մանրամասնութեան համար հեռաձայնել՝ 01-242556 փոստով:

